

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Պայմանագրային ֆոնդի ՀՎՀՀ 02624783  
24.01.2023թ թիվ 7 և որոշմամբ  
ԳՐԱՆՑՎԱԾ Է

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ատեթ Մենեջմենթ Արմենիա»  
սահմանափակ պատասխանատվությամբ  
ընկերության դիտորդ խորհրդի  
(իրավասու մարմնի անվանումը)

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

09/12/2013թ թիվ 2 որոշմամբ

Մարտին Գալստյան

Փոփոխված է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ատեթ  
Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ  
պատասխանատվությամբ ընկերության դիտորդ  
խորհրդի

  
(ստորագրություն)

13/08/2019 թվականի թիվ 40/3 որոշմամբ և  
06/12/2022 թվականի թիվ 61 որոշմամբ  
(իրավասու մարմնի անվանում)

Դիտորդ խորհրդի նախագահ  
(իրավասու անձի պաշտոնը)

Էռնստ Լյուդվիգ Դրայսս



(անուն, ազգանուն, ստորագրություն)

#### ԿԱՆՈՆՆԵՐ

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ատեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ  
ընկերության կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդի (նոր խմբագրություն)

Կառավարչի և պայմանագրային ֆոնդի լրիվ անվանումը  
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....	2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	3
ԳԼՈՒԽ I. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	5
ԳԼՈՒԽ II. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .....	7
ԳԼՈՒԽ III. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ .....	7
ԳԼՈՒԽ IV. ՓԱՅԵՐԸ, ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓԱՅԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ .....	16
ԳԼՈՒԽ V. ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ .....	17
ԳԼՈՒԽ VI. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ.....	26
ԳԼՈՒԽ VII. ՓԱՅԵՐԻ ՀԵՏԳՆՈՒՄԸ (ՄԱՐՈՒՄԸ) ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ.....	27
ԳԼՈՒԽ VIII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ԶԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....	30
ԳԼՈՒԽ IX. ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	31
ԳԼՈՒԽ X. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՈՒՄԸ.....	32
ԳԼՈՒԽ XI. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ .....	33
ԳԼՈՒԽ XII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	35
ԳԼՈՒԽ XIII. ՊԱՏՎԻՐԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	36
ԳԼՈՒԽ XIV. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ.....	37
ԳԼՈՒԽ XV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ .....	38
ԳԼՈՒԽ XVI. ՖՈՆԴԻ ՀԱՐԿՈՒՄԸ .....	39
ԳԼՈՒԽ XVII. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	39
ԳԼՈՒԽ XVIII. ՖՈՆԴԻ ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ .....	39
ԳԼՈՒԽ XIX. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	41
ԳԼՈՒԽ XX. ՊԱՀԱՌՈՒԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	41
ԳԼՈՒԽ XXI. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	42
ԳԼՈՒԽ XXII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ.....	42
ԳԼՈՒԽ XXIII. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ .....	43

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն փաստաթուղթը սահմանում է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) և միաժամանակ հանդիսանում ազդագիր և պայմանագիր ֆոնդի մասնակիցների համար:

Կանոնները նպատակ ունեն փրամադրել կարևոր տեղեկատվություն «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ»-ի (այսուհետ՝ Ֆոնդ), դրա ներդրումային քաղաքականության, Ֆոնդի մասնակիցներին առաջարկվող փայերի մասին:

Կանոնները հաստատվել են «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ Դիպորդ խորհրդի կողմից:

Կանոնները կազմվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն: Կանոնների և ՀՀ օրենսդրության միջև հակասության դեպքում ՀՀ օրենսդրության դրույթները գերակայում են:

<b>Ֆոնդի անվանումը</b>	Լրիվ անվանումն է՝	«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ»
	Կրճատ անվանումն է՝	Ցե- Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ
	Անգլերեն լրիվ անվանումն է՝	“C-QUADRAT Ampega Asset Management Armenia” Limited Liability Company Fixed Income
	Անգլերեն կրճատ անվանումն է՝	C-QUADRAT Ampega Fixed Income Pension Fund

<b>Ֆոնդի նկարագրությունը՝</b>	Ֆոնդը բաց պայմանագրային ֆոնդ է և հանդիսանում է պարտադիր կուրակային կենսաթոշակային ֆոնդ ՀՀ գործող օրենսդրության իմաստով: Ֆոնդը հանդիսանում է կայուն եկամտային ֆոնդ, որի ակտիվները չեն կարող ներդրվել բաժնային արժեթղթերում և դրանց վրա հիմնված ածանցյալ գործիքներում:
<b>Ֆոնդի Կառավարիչը (այսուհետ՝ Կառավարիչ)՝</b>	«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ գրանցման համար՝ 3, Կառավարչի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության փ. 37, 4-րդ հարկ
<b>Ֆոնդի Պահառուն (այսուհետ՝ Պահառու)՝</b>	«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ գրանցման համար՝ 1, Պահառուի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ
<b>Ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողը (այսուհետ՝ Մասնակիցների ռեեստրը վարող)՝</b>	«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ գրանցման համար՝ 1: Մասնակիցների ռեեստրը վարողի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ
<b>Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողը՝</b>	«Ռայֆայզն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ» Ավստրիա, ք. Վիեննա, Ամ Ստադթպարկ 9
<b>Ֆոնդի ստեղծումը՝</b>	«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի Դիպոզիտ Խորհրդի թիվ 1 որոշման հիման վրա: Ֆոնդը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում:
<b>Ֆոնդի գտնվելու վայրը՝</b>	Կառավարչի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության փ. 37, 4-րդ հարկ

**ԳԼՈՒԽ I. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Ֆոնդի կանոններում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- **Կանոններ՝** «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ»-ի կանոններ,
- **Ֆոնդ՝** «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ»,
- **Մասնակից՝** սոցիալական վճար կատարող (կատարած) անձ, որի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվել է կուտակային հատկացում կամ անձ, որն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք է բերել Ֆոնդի փայեր: Կանոնների համաձայն՝ Ֆոնդի Կառավարիչը մասնակից չի հանդիսանում:
- **Կենսաթոշակային ֆոնդի փայ՝** սոցիալական նպատակներով թողարկվող անվանական ներդրումային արժեթուղթ, որը հավաստում է իր տիրոջ՝ Ֆոնդի ակտիվներում մասնակցության և կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքը:
- **Ֆոնդի զուտ ակտիվների արժեք՝** Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների հանրագումարի և Ֆոնդի ստանձնած պարտավորությունների արժեքի տարբերությունն է:
- **Փայի հաշվարկային արժեք՝** Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկված և չմարված փայերի քանակի հարաբերությունը:
- **Հաշվարկման օր՝** այն օրը, երբ հաշվարկվում և հրապարակվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը:
- **Գնահատման օր՝** այն օրը, որի համար հաշվարկվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը:
- **Կտրման պահ՝** Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի գնահատման օրվա UTC+4 ժամային գոտու ժամը 23:59-ը:
- **Երաշխիքային ֆոնդ՝** Հայաստանի Հանրապետության «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի Մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների՝ տարեկան գնաճով ճշգրտված չափով վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդ:
- **Կոնտրազենտ՝** Ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող գործարքների շրջանակում Կառավարիչից բացի գործարքի կողմ հանդիսացող անձ:

- **Էական իրադարձություններ՝** իրադարձություններ, որոնք կարող են ազդել Կառավարչի կողմից իր՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա և ներառում, բայց չեն սահմանափակում հետևյալ դեպքերից մեկը կամ մի քանիսը. (ա) շուկայի խափանումներ, այդ թվում՝ կարգավորվող շուկաների (բորսաների) չկանխատեսված փակումներ կամ աշխատանքի չպլանավորված ընդհատումներ, կարգավորվող շուկաների, բորսաների, բանկային համակարգի, վճարահաշվարկային համակարգի բնականոն աշխատանքի խափանումներ (այդ թվում նաև՝ տեխնիկական), (բ) անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով առաջացած դեպքերը: Էական Իրադարձության առկայությունը կամ բացակայությունը որոշվում է Կառավարչի կողմից:
- **Աշխատանքային օր՝** ցանկացած օր, որը չի հանդիսանում շաբաթ կամ կիրակի օր կամ «Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով տոնի կամ հիշատակի օր կամ ոչ աշխատանքային օր Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի համար:
- **Մասնակիցների ռեեստրը վարողի Ծրագրային համակարգ՝** Մասնակիցների ռեեստր վարողի գործառույթների իրականացումն ապահովող համակարգչային ծրագրերի ամբողջություն:
- **Կանոնակարգ 10/04՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04:
- **Կանոնակարգ 10/32՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների կողմերը և ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները» կանոնակարգ 10/32:

2. Կանոններում օգտագործվող այլ հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Կուտակային կենսաթոշակների մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», «Արժեթղթերի շուկային մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստները, եթե այլ բան սահմանված չէ Կանոններով և/կամ Կանոնների դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

**ԳԼՈՒԽ II. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

3. Ֆոնդը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված, Կանոնների հիման վրա ձևավորվող, անձանց և պետության կողմից կատարված վճարների և դրանց ներդրման հաշվին ձևավորված ակտիվների ամբողջությունն է, որը կառավարվում է Ֆոնդի Կառավարչի կողմից և հանդիսանում է Մասնակիցների սեփականությունը: Ֆոնդի ակտիվների և դրանցով ստացվող եկամուտներում յուրաքանչյուր Մասնակցի՝ իր մասի նկատմամբ իրավունքը հավաստվում է Կենսաթոշակային ֆոնդի փայով:

4. Ֆոնդի գործունեության և Մասնակիցների ու Կառավարչի փոխհարաբերությունների հիմքերը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Կանոններով:

5. Կառավարչի կողմից Ֆոնդի կառավարման հիմնական նպատակը Ֆոնդի ակտիվների հնարավորինս բարձր եկամտաբերություն ապահովելն է՝ ղեկավարվելով լավագույն ջանքերի գործադրման սկզբունքով: Կառավարչի՝ Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա կարող են ազդել Էական իրադարձություններ: Վերջիններիս ի հայտ գալու դեպքում Կառավարիչը պատասխանատվություն չի կրելու այն խախտումների համար, որոնք ի հայտ են եկել այդպիսի Էական իրադարձությունների հետևանքով, եթե Կառավարիչը գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում:

**ԳԼՈՒԽ III. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

6. Ֆոնդի ներդրումային գործունեությունը հիմնված է ակտիվների ապահովության և եկամտաբերության, ռիսկերի դիվերսիֆիկացիայի և համարժեք իրացվելիության ապահովման սկզբունքների վրա, որին Կառավարիչը հասնում է տարբեր ֆինանսական գործիքներում ներդրումներ կատարելու միջոցով:

7. Ֆոնդի Կառավարիչը Ֆոնդի Մասնակիցներին չի երաշխավորում ներդրումային եկամուտ:

8. Ֆոնդի ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքն է՝ ապահովել Ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ Ֆոնդի ակտիվների 100%-ը ներդնելով պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այնպիսի ներդրումային ֆոնդերում, որոնց ակտիվները ներդրվում են վերը նշված արժեթղթերում և ավանդներում:

9. Ֆոնդի ակտիվների հստակ տեղաբաշխումը ըստ տարբեր ակտիվների և ներդրումային նպատակների որոշվում է Ֆոնդի Կառավարչի ընթացիկ կառավարչական գործառույթների միջոցով: Ֆոնդի ակտիվներով ներդրումներ

կատարելիս Կառավարիչը որոշումներ է կայացնում ըստ տարբեր ակտիվների տեսակների, դասերի, թողարկողների, ռեգիոնալ կամ ճյուղային առանձնահատկությունների՝ մնալով ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված Ֆոնդի ներդրումային սահմանափակումների և հիմնարար սկզբունքների շրջանակում: Ֆոնդի ակտիվները ներդրվում են՝ Ֆոնդի գործարար նպատակներից և Մասնակիցների շահերից, լավագույն փորձից և ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներից ելնելով:

10. Կառավարիչը Ֆոնդի ակտիվները ներդնում է ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված սահմանափակումներին համապատասխան: Կառավարիչը Ֆոնդի ակտիվները կարող է ներդնել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում՝ Կանոնների 11-14-րդ կետերում նշված սահմանափակումների ներքո:

11. Հայաստանի Հանրապետության տարածքում Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

- 1) բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկը անվճարունակության (սնանկության) գործընթացում չէ,
- 2) Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,
- 3) Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում կամ նոր թողարկված այնպիսի արժեթղթերում, որոնց համար թողարկման և/կամ առաջարկի պայմաններով նախատեսված է կարգավորվող շուկաներում առևտրի թույլտվություն ստանալը դրանց թողարկմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում,
- 4) այն ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում, որոնք վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից,
- 5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ընդ որում, հեջավորման նպատակով ածանցյալ ֆինանսական գործիքում ներդրումները իրականացվում են Կանոնակարգ 10/32-ով սահմանված պայմաններով և կարգով:

12. Արտասահմանում Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

- 1) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կամ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) անդամ պետությունների<sup>1</sup> բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական

---

<sup>1</sup> ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունները պետք է ընդգրկված լինեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 1-ում նշված պետությունների ցանկում:



կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում, ընդ որում, Ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա բանկում, որն ունի առնվազն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ» վարկանիշ:

2) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների Կենտրոնական բանկերի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,

3) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում,

4) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդերի փայերում (բաժնետոմսերում),

5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ընդ որում, հեջավորման նպատակով ածանցյալ ֆինանսական գործիքում ներդրումները իրականացվում են Կանոնակարգ 10/32-ով սահմանված պայմաններով և կարգով:

13. Ֆոնդի ակտիվները ներդրվում են հետևյալ սահմանափակումների ներքո՝

1) Ֆոնդի՝ արտասահմանյան արժույթով ներդրումների առավելագույն չափը չպետք է գերազանցի ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Ընդ որում, ոչ փոխարկելի արտասահմանյան արժույթով կատարվող ներդրումների առավելագույն չափը չպետք է գերազանցի Ֆոնդի ընդհանուր ակտիվների 3 տոկոսը:

2) Բանկային հաշիվներում և ավանդներում (այդ թվում՝ բանկում միջոցների ավանդագրումը հավաստող արժեթղթերում) (այսուհետ՝ բանկային ավանդ) կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը:

3) Մեկ բանկում, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն փոխկապակցված ճանաչված բանկերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը:

4) Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության համայնքերի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը: Այս սահմանափակումը չի տարածվում միայն կենսաթոշակային ֆոնդերի համար թողարկված արժեթղթերում կատարվող ներդրումների

- վրա, որի դեպքում մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը:
- 5) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կամ այդ պետությունների կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը:
- 6) Սույն կետի 4) և 5) մասերով նախատեսված արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 80 տոկոսը:
- 7) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի համաձայն արժեթղթավորման հիմնադրամների թողարկած արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 5 տոկոսը:
- 8) Մեկ թողարկողի թողարկած արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը կարող է հասնել Ֆոնդի ակտիվների 25 տոկոսի, եթե այդ արժեթղթերը ապահովված պարտատոմսեր են, մասնավորապես, դրանք բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի համաձայն թողարկված ապահովված հիփոթեքային պարտատոմսեր են, ինչպես նաև օտարերկրյա բանկերի թողարկած պարտքային արժեթղթեր, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցները ներդրվում են այնպիսի ակտիվներում, որոնք՝
- 1) այդ պարտքային արժեթղթերի վավերականության ամբողջ ժամանակահատվածի համար բավարար ապահովություն (ծածկույթ) են հանդիսանում դրանց գծով ամրագրված պարտավորությունների կատարման համար, և
  - 2) թողարկող բանկի անվճարունակության կամ սնանկության դեպքում առաջնահերթորեն օգտագործվում են այդ պարտքային արժեթղթերի գծով պարտավորությունների կատարման (արժեթղթի մայր գումարի (անվանական արժեքի) և հաշվեգրված տոկոսների փոխհատուցման) համար:
- 9) Ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 50 տոկոսը: Ընդ որում, ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը, եթե դրանք՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆոնդերի դեպքում բաց, հրապարակային, ստանդարտ, տարատեսականացված ներդրումային ֆոնդեր չեն,
  - 2) արտասահմանյան պետությունում գրանցված ֆոնդերի դեպքում բաց և հրապարակային ներդրումային ֆոնդեր չեն, որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն ներդրումային ֆոնդի ակտիվների առնվազն 90 տոկոսը պետք է ներդրվի միայն բանկային ավանդներում, պետական պարտատոմսերում, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ թույլատրվող արժեթղթերում կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ իրացվելի ակտիվներում:
- 10) Միննույն կառավարչի կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերում կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կառավարիչների ներդրումային ֆոնդերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 25 տոկոսը:
  - 11) Մեկ թողարկողի արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսը, իսկ փոխկապակցված թողարկողների արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 15 տոկոսը, եթե այլ բան նախատեսված չէ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով:
  - 12) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝
    - ա) մեկ թողարկողի թողարկած պարտքային արժեթղթերի ավելի քան 40 տոկոսում.
    - բ) այլ ֆոնդի փայերի ավելի քան 25 տոկոսում:Ընդ որում, սույն մասը չի կիրառվում սույն կետի 4-5-րդ մասերով նախատեսված արժեթղթերի նկատմամբ:
  - 13) Կառավարիչը կարող է Ֆոնդի անունից ներգրավել փոխառու միջոցներ մինչև Ֆոնդի ակտիվների 10%-ի չափով: Ներգրավված յուրաքանչյուր փոխառության (վարկի) ժամկետը չի կարող գերազանցել 3 ամիսը:
  - 14) Մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 15 տոկոսը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ֆոնդի ակտիվներում ընդգրկված ներդրումային գործիքների դեպքում հնարավոր չէ հստակ որոշել որևէ կոնկրետ պետության մասնակցության աստիճանը:
  - 15) Ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (այդ թվում՝ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ

Ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 30 տոկոսը:

- 16) Ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (բացառությամբ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:
- 17) Մեկ անձի հետ ածանցյալ գործիքով կնքված գործարքի չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների արժեքի 10 տոկոսը, եթե գործարքի կողմը բանկ է, կամ գործարքը կնքվել է կարգավորվող շուկայում, և չի կարող գերազանցել 5 տոկոսը մնացած այլ դեպքերում: Ֆոնդի ակտիվներում ներառված բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքը:
- 18) Կառավարիչը կարող է Ֆոնդի անունից և Ֆոնդի ակտիվների հաշվին կնքել ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ: Ընդ որում, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքման դեպքում հաշվի են առնվում Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներդրումային սահմանափակումները:

#### 14. Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

- 1) Ֆոնդի Կառավարչի և Պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում կամ ածանցյալ ֆինանսական գործիքներում, որոնց կողմ են նրանք հանդիսանում,
- 2) Ֆոնդի Կառավարչի կամ Պահառուի աուդիտն իրականացնող անձի, Ֆոնդի Կառավարչին կամ Պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց թողարկած արժեթղթերում,
- 3) անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաճ ապրանքներ, թանկարժեք մեքենաներ և այլն),
- 4) այն ակտիվներում, որոնց օտարումն արգելված կամ սահմանափակված է:

Ընդ որում, սույն կետի 1-ին մասը չի տարածվում Ֆոնդի Կառավարչի (կամ վերջինիս հետ փոխկապակցված անձի) կողմից կառավարվող այլ Ֆոնդի փայերում ներդնելու դեպքի վրա, եթե առկա են հետևյալ բոլոր պայմանները.

ա. տվյալ Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը չի հակասում Ֆոնդի ներդրումային նպատակներին,

բ. դրա համար չեն գանձվում փայերի (բաժնետոմսերի) մարման և տեղաբաշխման վճարներ,

գ. Կառավարչի կողմից կառավարվող Ֆոնդի ակտիվներն իր կողմից կառավարվող մեկ այլ ֆոնդում ներդնելու դեպքում նույն ակտիվները տարբեր ֆոնդերում ներդնելով՝ դրանցից չեն գանձվում կրկնակի պարգևավճարներ:

15. Ֆոնդի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակային և արժութային սահմանափակումների հաշվարկման համար հիմք է ընդունվում Ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքը:

16. Ֆոնդի ակտիվների ներդրման քանակային և արժութային սահմանափակումները տարածվում են Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը երկու միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցելու դեպքում:

17. Ֆոնդի ակտիվներում այս և այլ ներդրումային սահմանափակումները սահմանվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

18. Նշված սահմանափակումները առավելագույն թույլատրելի սահմանաչափերն են: Ֆոնդի ակտիվների փաստացի ներդրումը այդ առավելագույն սահմանաչափերի ներքո կատարվում է՝ հաշվի առնելով Մասնակիցների լավագույն շահերը և Ֆոնդի ակտիվների ներդրման սկզբունքները:

19. Ֆոնդի ներդրումներն ուղեկցվում են մի շարք ռիսկերով, որոնք կարող են ազդել Ֆոնդի եկամտաբերության և փայերի արժեքի վրա: Մասնավորապես, ներդրումային ռիսկերի ցանկը ներառում է, սակայն չի սահմանափակվում, հետևյալով.

1) Շուկայական ռիսկ՝ արժեթղթերի կամ այլ ակտիվների շուկայական գների կամ տոկոսադրույքների փոփոխության արդյունքում ակտիվի արժեքի փոփոխության ռիսկ:

Շուկայական ռիսկի տեսակներ են.

- Տոկոսադրույքի ռիսկ՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում ակտիվի արժեքի փոփոխության ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկի տարատեսակներ են Վերագնահատման ռիսկը, Բազային ռիսկը, Եկամտաբերության կորի ռիսկը և Օպցիոնի ռիսկը:
- Գնային ռիսկ՝ այս ռիսկը կապված է ակտիվի գնի տատանողականության հետ: Գնային ռիսկը արտահայտվում է տվյալ գործիքի գնի փոփոխության և ընդհանուր շուկայական գների փոփոխության կախվածությունով:
- Արտարժութային ռիսկ՝ առաջանում է արտարժութային ակտիվների և պարտավորությունների տարբերության կամ ոչ ամբողջությամբ հեջավորված արտարժութային ակտիվների և

պարտավորությունների տարբերության տեղական արժույթով վերագնահատման արդյունքում՝ կապված տեղական արժույթի՝ արտարժույթով արտահայտված գնի փոփոխության հետ:

Շուկայական ռիսկը մեղմելու նպատակով ձեռք է բերվում բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնցում ներդրվել կամ ներդրվում են Ֆոնդի ակտիվները, դիվերսիֆիկացվում են Ֆոնդի ներդրումները, ինչպես նաև կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ:

2) Վարկային ռիսկ՝ Ֆոնդի ակտիվներում ընդգրկված արժեթղթի թողարկողի, Կոնտրագենտի կամ գործարքի մյուս կողմի՝ իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի չկատարելու կամ պայմանագրի (արժեթղթի շրջանառության մեջ լինելու) ընթացքում արժեթղթի թողարկողի, Կոնտրագենտի կամ պայմանագրի մյուս կողմի դեֆոլտի, վարկունակության իջեցման, վարկանշի անկման, անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալու, սնանկության ռիսկի մեծացման արդյունքում ֆինանսական կորուստների առաջացման ռիսկն է (օրինակ՝ իր թողարկած պարտատոմսերը ժամանակին մարելու թողարկողի անկարողությունը):

Վարկային ռիսկի տեսակներ են.

- Դեֆոլտի ռիսկ՝ արժեթղթի թողարկողի, Կոնտրագենտի կամ գործարքի մյուս կողմի՝ իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի չկատարելու ռիսկ:
- Սնանկության ռիսկ:
- Վարկունակության իջեցման ռիսկ:
- Հաշվարկային ռիսկ՝ արժեթղթերի, ակտիվների և/կամ դրամական հոսքերի փոխանակման արդյունքում առաջացող ռիսկ կապված՝ հաշվարկային համակարգում գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները ժամանակին կամ ամբողջությամբ չկատարելու հետ: Հաշվարկային ռիսկը նվազեցնելու նպատակով գործարքները հիմնականում իրականացվում են Կարգավորվող շուկաներում, որտեղ գործում է «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքը:

Վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Ֆոնդի ներդրումները դիվերսիֆիկացվում են, ինչպես նաև կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ:

3) Իրացվելիության ռիսկ՝ Ֆոնդի ակտիվները ժամանակին և սահմանված արդարացի գնով իրացնելու կամ պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու անհնարինության ռիսկն է: Իրացվելիության ռիսկ է համարվում նաև գերիրացվելիության ռիսկը: Իրացվելիության ռիսկը զսպելու նպատակով Ֆոնդի ակտիվների մի մասը կարող է ներդրվել

բարձր որակի իրացվելի ակտիվներում, կարճաժամկետ պարտքային արժեթղթերում և/կամ բանկային հաշիվներում: Որպես իրացվելիության ռիսկի զսպման հավելյալ գործիքներ կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ, ռեպո համաձայնագրեր, պայմանական ակտիվներ և իրացվելիության ներգրավման այլ միջոցները:

- 4) Պահառուի ռիսկ՝ Պահառուի անվճարունակության, սնանկացման, անգործության կամ դիտավորյալ գործողությունների հետևանքով իր կողմից ի պահ ընդունված ակտիվների կորստի կամ ոչնչացման ռիսկն է:
- 5) Գնաճի ռիսկ՝ գնաճի պատճառով ներդրումների իրական արժեքի նվազման ռիսկն է: Գնաճի ռիսկը կառավարելու նպատակով Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ինդեքսավորվող գործիքներում:
- 6) Երկրի ռիսկ՝ ներդրումների արժեքի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող անբարենպաստ քաղաքական, տնտեսական, արժույթային, տեխնոլոգիական զարգացումների կամ իրադարձությունների ի հայտ գալու ռիսկն է այն երկրներում, որտեղ ներդրվում են Ֆոնդի ակտիվները:
- 7) Իրավական, վերահսկողական և համապատասխանության ռիսկ՝ Ֆոնդի գործունեության բնագավառում օրենսդրության փոփոխության՝ այդ թվում՝ ներդրումային ֆոնդերի, մասնավորապես՝ կենսաթոշակային ֆոնդերի ոլորտը կարգավորող, արժեթղթերի շուկան կարգավորող և հարկային օրենսդրության փոփոխության, իրավական և դատական դեպքերի ի հայտ գալու ռիսկն է:
- 8) Գործառնական ռիսկ՝ Ֆոնդի կառավարման գործընթացներում հնարավոր կորստի ռիսկն է՝ պայմանավորված ներքին գործընթացների ոչ համարժեքությամբ, ծրագրային և տեխնիկական համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնով կամ արտաքին ազդեցություններով: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով, անընդհատ մոնիթորինգի են ենթարկվում ներքին գործընթացները, հնարավորինս ավտոմատացվում են ռիսկային գործառույթները, ինչպես նաև օգտագործվում են պահուստային տեխնիկական և ծրագրային համակարգերի հնարավորությունները, տեղեկատվությունը պարբերաբար պատճենվում է և պահվում առանձին վայրում, ցանկացած պահին այն վերականգնելու նպատակով, ըստ անհրաժեշտության կիրառվում է երկու անձի կողմից կարևոր գործառույթների կրկնակի իրականացում, կամ ստուգումների և հաստատումների տարբերակը:

20. Ֆոնդի Կառավարիչը ձգտելու է խուսափել այնպիսի իրավիճակներից, որտեղ Կառավարիչը և Ֆոնդի Մասնակիցները շահերի բախման մեջ կհայտնվեն: Այնուամենայնիվ, եթե նման իրավիճակներ ի հայտ գան, Կառավարիչը առաջնահերթությունը տալու է Ֆոնդի Մասնակիցների շահերին:

21. Ֆոնդի ներդրումային քաղաքականության իրականացման հետ կապված ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգվում է Կառավարչի ներքին ընթացակարգերով:

#### **ԳԼՈՒԽ IV. ՓԱՅԵՐԸ, ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓԱՅԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

22. Ֆոնդի փայլ սոցիալական նպատակներով թողարկվող անվանական արժեթուղթ է, որը հավաստում է դրա տիրոջ (Մասնակցի)՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքը:

23. Փայլ համապատասխանում է Մասնակցի՝ Ֆոնդի ակտիվներում ունեցած բաժնեմասին: Փայլ չի կարող միաժամանակ պատկանել մի քանի անձանց: Փայերը չեն հանդիսանում ամուսինների համատեղ սեփականությունը: Փայեր կարող են ձեռք բերել միայն ֆիզիկական անձինք և Ֆոնդի Կառավարիչը: Ֆոնդի փայերը ժառանգվում են, չեն կարող փոխանցվել կամ առանձնացվել Ֆոնդի ակտիվներից:

24. Ֆոնդը չի կարող թողարկել տարբեր դասերի փայեր: Մեկ փայի սկզբնական անվանական արժեքը 1000 ՀՀ դրամ է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի 2018 թվականի մարտի 30-ի N 125-Ն հրամանի:

25. Փայլ բաժանելի է: Փայերի բաժանումից առաջացող կոտորակային մասերը կլորացվում են ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ:

26. Փայերը հաշվառվում են Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից վարվող կենսաթոշակային հաշվում էլեկտրոնային գրառումների տեսքով (փայերը ոչ թղթային են):

27. Փայլ Մասնակցին Ֆոնդի ակտիվներով իրականացվող գործարքների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք չի տրամադրում:

28. Ֆոնդի Մասնակիցների ընդհանուր ժողով չի գումարվում: Մասնակիցը չի կարող պահանջել Ֆոնդի ակտիվներից իր մասնաբաժնի առանձնացում:

29. Մասնակիցները ստանում են փայերի տիրապետումից բխող հետևյալ իրավունքները՝

- 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պահանջել փայերի մարում կամ փոխանակում,
- 2) ժառանգել փայերը,
- 3) մարված փայերի գումարի չափով կամ դրա մի մասով կնքել անուիտետի պայմանագիր, կուտակված միջոցները ստանալ ծրագրային վճարի կամ միանվագ տեսքով,



- 4) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով սեփականության իրավունք ստանալ իր փայերի քանակին համապատասխան Ֆոնդի ակտիվների մասնաբաժնի նկատմամբ,
- 5) Ֆոնդի դադարեցման դեպքում Ֆոնդի ակտիվների մնացորդից ստանալ իր փայերի քանակին համապատասխան մասնաբաժինը՝ դրամական տեսքով,
- 6) փոխհատուցում պահանջել Ֆոնդի Կառավարչից նրա պարտականությունների խախտման հետևանքով իրեն պատճառված վնասների համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 7) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ կամ Կանոններով սահմանված այլ գործողություններ:

30. Մասնակցի համար փայերով հավաստվող իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում փայերի թողարկման պահից և դադարում են փայերի մարման պահից: Փայը համարվում է թողարկված Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից կենսաթոշակային հաշվում նոր փայերի առկայության մասին համապատասխան գրանցում կատարելու պահից և մարվում են դրանց մարման պահանջ ներկայացնելու պահի դրությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերջին հաշվարկած և հրապարակված տվյալ փայի հետգնման գնով:

31. Փայերի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է Մասնակիցների ռեեստրում գրառում կատարելու պահից:

32. Մասնակիցն իր փայերով ամրագրված իրավունքները պետք է իրականացնի բարեխղճորեն և ՀՀ օրենսդրությանը ու Կանոններին համապատասխան:

33. Մասնակիցն անձամբ պատասխանատու չէ Կառավարչի կողմից Ֆոնդի անունից ստանձնած պարտավորությունների համար, ինչպես նաև այն պարտավորությունների համար, որոնց կատարումը Կառավարիչն իրավունք ունի պահանջել Ֆոնդից՝ Կանոններին համապատասխան: Այդ պարտավորությունների կատարման համար Մասնակցի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Ֆոնդի ակտիվներում նրա ունեցած բաժնեմասով:

## **ԳԼՈՒԽ V. ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ**

34. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների հանրագումարի և Ֆոնդի ստանձնած պարտավորությունների արժեքի տարբերությունն է:

35. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով:

36. Արտարժույթը և արտարժույթային ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով Ֆոնդի զուտ ակտիվների

արժեքի Գնահատման օրվա դրությամբ համապատասխան արտարժույթի կարգավորվող շուկայում տվյալ արտարժույթով առևտրային նստաշրջանի վերջին գործարքի գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ արտարժույթի համար Գնահատման օրվա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած հաշվարկային փոխարժեքով:

37. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում բանկային հաշիվներում, բրոքերային հաշիվներում, դրամական միջոցների հաշվառման հաշիվներում առկա միջոցների և բանկային ավանդների արժեքը որոշվում է Կտրման պահի դրությամբ տվյալ հաշիվներում առկա մնացորդային գումարների և հաշվեգրված ու չստացված տոկոսագումարների հանրագումարով: Ավանդների, դրամական միջոցների հաշվառման հաշիվների, և ընթացիկ հաշիվների, բրոքերային հաշիվների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները հաշվառվում են որպես հաշվեգրված եկամուտ Կտրման պահի դրությամբ: Ոչ աշխատանքային օրերի համար հաշվեգրված տոկոսները ներառվում են Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում: Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում ավանդների, դրամական միջոցների հաշվառման հաշիվների, ընթացիկ հաշիվների, բրոքերային հաշիվների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ:

38. Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված պետական արժեթղթերը գնահատվում են Գնահատման օրվա Կտրման պահի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի վերջին հասանելի եկամտաբերության կորի հիման վրա: Փայի հաշվարկային արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման:

39. Հայաստանի Հանրապետության կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ոչ պետական արժեթղթերը գնահատվում են Գնահատման օրվա Կտրման պահի դրությամբ կարգավորվող շուկայում տվյալ արժեթղթի փակման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ Գնահատման օրվա առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների միջին թվաբանականով: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները կլորացվում են ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ:

40. Եթե Կանոնների 39-րդ կետով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) Գնահատման օրվա կտրման պահի դրությամբ, ապա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթը գնահատվում է տվյալ արժեթղթի՝ Գնահատման օրվան նախորդող վերջին հայտնի փակման գնով, բացառությամբ այն դեպքերի, երբ Կանոնների 39-րդ կետով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) Գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ

մեկի համար: Այդ պարագայում կիրառվում են Կանոնների 48-րդ կետով սահմանված դրույթները:

41. Հայաստանի Հանրապետությունում բաժանորդագրման կամ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված ոչ պետական արժեթղթերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկողի կողմից հրապարակված վերջին հասանելի գներով մինչև տվյալ արժեթղթի՝ կարգավորվող շուկայում շրջանառության թույլտվություն ստանալը և կարգավորվող շուկայում հրապարակված գնի առկայությունը, որից հետո՝ գնահատումն իրականացվում է Կանոնների 39-րդ և 40-րդ կետերի համաձայն: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները մինչև տվյալ արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալը վերցվում են հրապարակման ճշտությամբ առանց կլորացման: Այն դեպքում, երբ բաժանորդագրման կամ հրապարակային առաջարկի միջոցով ձեռք բերված նոր թողարկված ոչ պետական արժեթղթերի համար թողարկողի կողմից հրապարակված գին հասանելի չէ, տվյալ արժեթղթերը գնահատվում են բաժանորդագրությամբ/հրապարակային առաջարկի միջոցով ձեռք բերման գնով՝ կլորացված ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ, այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ արժեթուղթը թույլատրված չէ կարգավորվող շուկայում առևտրին և տվյալ արժեթղթի գծով կարգավորվող շուկայում գին հրապարակված չէ, որից հետո՝ գնահատումն իրականացվում է Կանոնների 39-րդ և 40-րդ կետերի համաձայն:

42. Հայաստանի Հանրապետությունում առաջնային աճուրդի միջոցով ձեռք բերված նոր թողարկված ոչ պետական արժեթղթերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են տվյալ առաջնային աճուրդի միջին կշռված գնով՝ կլորացված ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ, այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ արժեթուղթը թույլատրված չէ կարգավորվող շուկայում առևտրին և տվյալ արժեթղթի գծով կարգավորվող շուկայում գին հրապարակված չէ, որից հետո՝ գնահատումն իրականացվում է Կանոնների 39-րդ և 40-րդ կետերի համաձայն:

43. Հայաստանի Հանրապետության անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերը, որոնք շրջանառվում են օտարերկրյա կարգավորվող շուկաներում (եվրոպարտատոմսեր) և Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերությունների կողմից արտարժույթով թողարկված եվրոպարտատոմսերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական աղբյուրներից ստացված գնով, որոնց առաջնայնությունը և գնանշման չափանիշները ներկայացված են Կառավարչի ինտերնետային կայքում տեղադրված առանձին ընթացակարգում: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ առանց կլորացման:

44. Օտարերկրյա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված օտարերկրյա պարտքային արժեթղթերը և ներդրումային ֆոնդերի փայերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են Ֆոնդի զուտ ակտիվների

հաշվարկն իրականացնողի կողմից տրամադրված միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական աղբյուրներից ստացված գնով, որոնց առաջնայնությունը և գնանշման չափանիշները ներկայացված են Կառավարչի ինտերնետային կայքում տեղադրված առանձին ընթացակարգում: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ առանց կլորացման:

45. Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի փայերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են դրանց հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ: Այն դեպքում, երբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի կողմից ողջամիտ և բավարար պարբերականությամբ Կառավարչին ներկայացվում են ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, ապա դրանք հաշվարկում ներառվում են տվյալ ներդրումային ֆոնդի կառավարչից գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և տվյալ ներդրումային ֆոնդի կառավարչից գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը տվյալ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից ստացվել է ոչ աշխատանքային օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի փայերի տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

46. Օտարերկրյա ներդրումային ֆոնդերի փայերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկողի կողմից հրապարակված փայերի վերջին հասանելի հաշվարկային արժեքի հիման վրա: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները ներառվում են հրապարակման ճշտությամբ առանց կլորացման: Օտարերկրյա արժեթղթերը և դրանց ձեռքբերման/վաճառքի հետ կապված միջնորդավճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են օտարերկրյա բրոքերից/Կոնտրագենտից գործարքի հաստատումը ստանալու օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և օտարերկրյա բրոքերից/Կոնտրագենտից գործարքի հաստատումը ստանալու օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատումը օտարերկրյա բրոքերի/Կոնտրագենտի կողմից ստացվել է ոչ աշխատանքային

օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա արժեթղթերի տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

47. Բաժանորդագրության միջոցով ձեռք բերված/վաճառված օտարերկրյա Ֆոնդերի փայերը և դրանց ձեռքբերման/վաճառքի հետ կապված միջնորդավճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի/Կոնտրագենտի կողմից ստացված տեղեկատվության օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի/Կոնտրագենտի կողմից ստացված տեղեկատվության օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը Պահառուից/Կոնտրագենտից ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում բաժանորդագրության միջոցով ձեռք բերված/վաճառված օտարերկրյա Ֆոնդերի փայերով կատարված տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

48. Կարգավորվող շուկայում առևտրին չթույլատրված արժեթուղթը գնահատվում է դրա հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ:

49. Օտարերկրյա պահառուի մոտ հաշվառվող դրամական միջոցների օտարերկրյա արժեթղթերի և ներդրումային ֆոնդերի փայերի փոխանցման հետ կապված միջնորդավճարները և այլ վճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են Պահառուի կողմից ստացված համապատասխան հիմնավորող հաշվարկային փաստաթղթի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ Կանոնակարգ 10/04-ով: Պահառուի կողմից ստացված համապատասխան հիմնավորող հաշվարկային փաստաթղթում առկա տեղեկատվությունը արտացոլվում է Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում, եթե Պահառուի կողմից համապատասխան հիմնավորող հաշվարկային փաստաթուղթը ստացվել է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և տվյալ փաստաթղթի ստացման օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո:

50. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա պահառու/ենթապահառու բանկում փոխարկված արտարժույթը արտացոլվում է գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի կողմից ստացված տեղեկատվության օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը

հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի կողմից ստացված տեղեկատվության օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը Պահառուից ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

51. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա Ֆոնդերի ստացվելիք շահաբաժինները հաշվեգրվում են շահաբաժնի հայտարարման օրվա դրությամբ՝ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա և վերագնահատվում Կանոնների 36-րդ կետի կարգով օրական կտրվածքով մինչև վճարման օրը: Եթե օտարերկրյա Ֆոնդերի շահաբաժինների վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա այն ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

52. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա արժեթղթերի, Հայաստանի Հանրապետության անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերի (եվրոպարտատոմսեր) և Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերությունների կողմից արտարժույթով թողարկված եվրոպարտատոմսերի ստացվելիք արժեկտրոնները հաշվեգրվում և վերագնահատվում են օրական կտրվածքով յուրաքանչյուր արժեկտրոնին բնորոշ հաշվեգրման և վերագնահատման սկզբունքին համապատասխան՝ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Եթե արժեկտրոնի վճարման վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը ստանում է ոչ աշխատանքային օրերին, ապա դրանք ներառվում են ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

53. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկման համար Ֆոնդի ակտիվները գույքագրվում են Կտրման պահի դրությամբ:

54. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկը կատարվում է Հաշվարկման օրը մինչև UTC+4 ժամային գոտու ժամը 11:00-ն Ֆոնդի Կառավարչին հասանելի ամենաթարմ տեղեկատվությամբ, բացառությամբ Կանոններով նախատեսված դեպքերի:

55. Ֆոնդի կազմում ներառված օտարերկրյա արժեթղթերի վերագնահատման համար հիմք են հանդիսանում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա՝ UTC+4 ժամային գոտու ժամը 06:30-ի դրությամբ հասանելի փակման գները: Կառավարչի կայքում հրապարակված ոչ աշխատանքային օրերի համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկի ժամանակ տվյալ

փակման գները հասանելի չեն, Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օգտագործվում են հաշվարկման պահին հասանելի վերջին փակման գները:

56. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը որոշվում է Ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքից՝ նվազեցնելով Ֆոնդի ստանձնած հետևյալ պարտավորությունները (պահանջները), որոնք հաշվարկվում են հաշվեգրման կարգով և կարող են ներառել՝

- 1) Կառավարչի պարգևավճարը,
- 2) Երաշխիքային ֆոնդին վճարվող պարբերական երաշխիքային վճարները,
- 3) Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտի վճարը,
- 4) Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը, այդ թվում՝ բրոքերային միջնորդավճարները և գործարքների իրականացման հետ կապված այլ վճարները (միջնորդավճարներ, հարկեր),
- 5) արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցումների գծով վճարները,
- 6) Ֆոնդի փայերի հետգնման (մարման) համար Ֆոնդի Մասնակիցներին վճարման ենթակա գումարները, այդ թվում, եթե հետգնումը (մարումը) տեղի է ունենում Ֆոնդի փայերի փոխանակման հետևանքով,
- 7) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) և ռեպո գործարքների գումարները,
- 8) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գծով վճարվելիք տոկոսները, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսները,
- 9) Ֆոնդի ակտիվների հաշվին վճարման ենթակա պարտադիր վճարները:

57. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Կառավարչի պարգևավճարը և պարբերական երաշխիքային վճարը հաշվարկվում են Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ: Գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրերի համար հաշվեգրված Կառավարչի պարգևավճարը և պարբերական երաշխիքային վճարը ներառվում են Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում:

58. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Ֆոնդի տարեկան աուդիտի վճարը հաշվեգրվում է գծային ամորտիզացիայի մեթոդով:

59. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում պարտավորությունները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ: Պարտավորությունների կուտակումը ոչ աշխատանքային օրերի համար արտացոլվում է Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

60. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում փայերի մարման պարտավորությունները ներառվում են փայերի սառեցման օրվա համար հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում: Գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրերին սառեցված փայերը և վերջիններիս հետ կապված մարման

պարտավորությունները ներառվում են Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

61. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակելուց հետո որևէ սխալի, էական իրադարձության կամ հանգամանքի տեղի ունենալու կամ ի հայտ գալու դեպքում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Կառավարչի մասնագիտական կարծիքով էականորեն կարող է ազդել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի վրա, Կառավարիչը պետք է վերագնահատի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը և/կամ Փայի հաշվարկային արժեքը, եթե վերագնահատման չիրականացմամբ կվնասվեին Մասնակիցների շահերը՝ բացառելով հայտնաբերված էական սխալի առկայությունը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հետագա հաշվարկում: Էական սխալի դեպքում փայի ուղղված հաշվարկային արժեքին կից պետք է ներկայացվեն ուղղման վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ:

62. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակելուց հետո Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ոչ էական սխալ բացահայտվելու դեպքում Կառավարիչը սխալի հայտնաբերման օրվան հաջորդող Գնահատման օրվա հաշվարկում պետք է այն ուղղի՝ բացառելով հայտնաբերված սխալի առկայությունը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հետագա հաշվարկում:

63. Փայի հաշվարկային արժեքը հավասար է Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկված և չմարված փայերի քանակի հարաբերությանը: Փայի հաշվարկային արժեքը և թողարկման ու մարման գները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ:

64. Ստանդարտացված ածանցյալ գործիքները գնահատվում են Գնահատման օրվա կտրման պահի դրությամբ կարգավորվող շուկայում տվյալ ածանցյալ գործիքի փակման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ Գնահատման օրվան նախորդող վերջին հայտնի փակման գնով: Եթե փակման գները հասանելի չեն Գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ մեկի համար, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ստանդարտացված ածանցյալ գործիքները գնահատվում են դրանց հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ածանցյալ գործիքների գները ներառվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման: Օտարերկրյա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված օտարերկրյա ածանցյալ գործիքները գնահատվում են Կանոնների 44-րդ կետով սահմանված կարգով:

65. Ոչ ստանդարտացված ածանցյալ գործիքները գնահատվում են Կանոնների 48-րդ կետով սահմանված կարգով:



66. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, Փայի հաշվարկային արժեքը և մարման ու թողարկման գները հաշվարկվում և հրապարակվում են յուրաքանչյուր աշխատանքային օր: Կառավարիչը որոշակի աշխատանքային օրերի կարող է չհաշվարկել և չհրապարակել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Այդ օրերը հրապարակվում են Կառավարչի ինտերնետային կայքում յուրաքանչյուր տարվա համար և ներառում են Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի ոչ աշխատանքային օրերը՝ անկախ դրանց՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային լինելու հանգամանքից:

67. Բացառություն են կազմում տարեվերջյան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, որը հաշվարկվում է առանձին՝ տարեվերջյան հաշվետվության մեջ ներառվելու նկատառումով, և յուրաքանչյուր տարվա առաջին աշխատանքային օրվա համար հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Մասնավորապես, Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի տարեվերջյան հաշվարկը ներառում է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը հաշվեգրված բոլոր ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական և արտասահմանյան շուկաներում վերջին հասանելի գները, իսկ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի տարեսկզբյան հաշվարկը ներառում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև առաջին աշխատանքային օրը ներառյալ հաշվեգրված ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև՝ Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ տեղական և արտասահմանյան շուկաներում վերջին հասանելի գները: Հաշվարկման օրվան նախորդող ոչ աշխատանքային օրերի համար հաշվեգրումները ևս ներառվում են Գնահատման օրվա հաշվարկում:

68. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի գնահատմանը և հաշվարկմանը վերաբերող և Կանոններով չկարգավորված հարցերը կանոնակարգվում են Կանոնակարգ 10/04-ով:

69. Կառավարիչը յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 15:00-ն Մասնակիցների ռեեստրը վարողի Ծրագրային համակարգ է մուտքագրում Գնահատման օրվա Փայի հաշվարկային արժեքը: Այն պարագայում, երբ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի կողմից Հաշվարկման օրվա ժամը 14:55-ի դրությամբ չի ուղարկվել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման և հրապարակման ենթակա տեղեկատվությունը, ապա Կառավարիչը կարող է Հաշվարկման օրվա ժամը 15:00-ին Մասնակիցների ռեեստրը վարողի Ծրագրային համակարգ չմուտքագրել Հաշվարկման օրվա Ֆոնդի Փայի հաշվարկային արժեքը՝ թողնելով անփոփոխ, այն է՝ Հաշվարկման օրվան նախորդող Գնահատման օրվա Փայի հաշվարկային արժեքը: Ըստ այդմ, Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը ևս մնում է անփոփոխ: Հաշվարկման օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Ֆոնդի ստանձնած պարտավորությունները պետք է հաշվարկվեն վերջին հրապարակված և ոչ էական սխալ պարունակող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա:

Ակտիվային հողվածներում առկա սխալների դեպքում ճշգրտումները պետք է կատարվեն ըստ համապատասխան հողվածի:

## **ԳԼՈՒԽ VI. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ**

70. Ֆոնդի փայերի թողարկումն ու տեղաբաշխումը կազմակերպում և իրականացնում է Ֆոնդի Մասնակիցների ռեեստրը վարողը՝ ՀՀ օրենսդրության և Կանոններին համապատասխան:

71. Փայերի թողարկումը շարունակական է, և թողարկման ծավալն ու թողարկվող փայերի քանակը ֆիքսված չեն:

72. Փայերի տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման վճար չի գանձվում, և փայի տեղաբաշխման գինը համընկնում է հաշվարկային արժեքի հետ: Փայերը տեղաբաշխվում են տեղաբաշխման պահին վերջին հայտնի փայի տեղաբաշխման գնով:

73. Փայերը տեղաբաշխվում են կուտակային հատկացումները Ֆոնդի Մասնակիցների ռեեստրը վարողի հաշվին փոխանցելու դեպքում. համապատասխան միջոցերն այնուհետև փոխանցվում են Ֆոնդի հաշվին:

74. Տեղաբաշխվող փայերի քանակը որոշվում է փոխանցված կուտակային հատկացումների և տեղաբաշխման գնի հարաբերությամբ:

75. Տեղաբաշխված փայերն արտացոլվում են Մասնակցի կենսաթոշակային հաշվում:

76. Ֆոնդի փայեր ձեռք բերելու համար Մասնակիցը պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ֆոնդի Մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնի Ֆոնդի ընտրության դիմում՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձեվով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգ» Կանոնակարգ 10/07-ի: Ֆոնդի ընտրության դիմումի ներկայացումից հետո Մասնակցի օգտին կատարված պարտադիր կուտակային վճարները կուղղվեն Ֆոնդ և դրանց դիմաց Մասնակիցը ձեռք կբերի Ֆոնդի փայեր:

77. Ֆոնդի ընտրության դիմումի ներկայացմամբ Մասնակիցը հավաստում է, որ ծանոթացել է և համաձայն է Կանոնների դրույթների հետ:

78. Եթե Մասնակիցը չունի կենսաթոշակային հաշիվ, ապա Ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա Մասնակիցների ռեեստրը վարողը նրա համար բացում է կենսաթոշակային հաշիվ:

79. Եթե անձը դարձել է պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի Մասնակից, սակայն իր օգտին պարտադիր կուտակային վճար կատարվելու պահից 30 օրվա ընթացքում չի ներկայացնում ֆոնդի ընտրության դիմում, ապա Մասնակիցների ռեեստրը վարողը պատահականության սկզբունքով, ծրագրային մոդուլի միջոցով Մասնակցի համար ընտրում է որևէ կառավարչի միջին ռիսկայնության (պահպանողական) ֆոնդ, որին ուղղվում են տվյալ Մասնակցի օգտին կատարված պարտադիր կուտակային վճարները:

80. Մասնակիցն իրավունք ունի Ֆոնդի իր փայերը փոխանակելու միայն այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերով:

81. Կանոնների 78-րդ և 79-րդ կետերում նշված դեպքում փայերի թողարկումը և տեղաբաշխումը կատարվում է Կանոնների 72-75-րդ կետերի համաձայն: Կանոններում նշված հիմքերից բացի ՀՀ օրենսդրությամբ կարող են նախատեսվել կենսաթոշակային հաշիվների բացման, Ֆոնդի փայերի թողարկման և տեղաբաշխման նաև այլ հիմքեր:

## **ԳԼՈՒԽ VII. ՓԱՅԵՐԻ ՀԵՏԳՆՈՒՄԸ (ՄԱՐՈՒՄԸ) ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

82. Ֆոնդի փայերի հետգնումը (մարումը) և մարման արդյունքում միջոցների վճարումը կազմակերպում է Ֆոնդի Մասնակիցների ռեեստրը վարողը ՀՀ օրենսդրության և Կանոններին համապատասխան:

83. Փայերի մարման արդյունքում վճարման ենթակա գումարը որոշվում է մարվող փայերի քանակի և փայերի հետգնման (մարման) գնի արտադրյալով և վճարվում է Ֆոնդի ակտիվներից:

84. Փայերի մարումն իրականացնելու օրը մարված փայերը դուրս են գրվում կենսաթոշակային հաշվից:

85. Փայերը մարելու և դրա արդյունքում ձևավորված միջոցները կենսաթոշակի ձևով ստանալու համար Մասնակիցը պետք է Մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնի պարտադիր կուտակային կենսաթոշակ ստանալու համապատասխան դիմում՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային

կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգ» Կանոնակարգ 10/07-ի:

86. Անձը կարող է ներկայացնել պարտադիր կուտակային կենսաթոշակ ստանալու համապատասխան դիմում, եթե լրացել է նրա կենսաթոշակային տարիքը կամ եթե լրացել է նրա 55 տարին, և նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը բավարարում է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պայմաններին:

87. Պարտադիր կուտակային կենսաթոշակ ստանալու համապատասխան դիմումով Մասնակիցը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում (կախված կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքից) ընտրել հետևյալ տարբերակներից որևէ մեկը կամ դրանց համակցությունը՝

1) եթե Մասնակցի միջոցները, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա Մասնակիցն իրավունք ունի կուտակային կենսաթոշակը ստանալու անուիտետի կամ ծրագրային վճարների կամ միանվագ վճարի ձևով,

2) եթե Մասնակցի միջոցները, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, բայց փոքր այդ կենսաթոշակի հնգապատիկից կամ հավասար է այդ կենսաթոշակի հնգապատիկին, ապա Մասնակիցը պարտավոր է իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման արդյունքում ստացված գումարի չափով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անուիտետի պայմանագիր,

3) եթե Մասնակցի միջոցները, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա Մասնակիցը պարտավոր է իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մի մասի մարման արդյունքում ստացված միջոցների հաշվին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անուիտետի պայմանագիր այն գումարի չափով, որը հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը կկազմի հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, իսկ մնացած մասը Մասնակիցն իրավունք ունի ստանալու անուիտետի կամ ծրագրային վճարների կամ միանվագ վճարի ձևով:

88. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը Մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու Ֆոնդերի փայերը մարելու և դրա արդյունքում ձևավորված գումարը միանվագ ստանալու պահանջ, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- 1) Մասնակիցը օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ է,
- 2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված հիվանդություններով հիվանդանալու (վիճակներում գտնվելու) դեպքում, որը հավաստվում է առողջապահության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմնի տված եզրակացությամբ,
- 3) Հայաստանի Հանրապետությունում աշխատող օտարերկրացի Մասնակիցը վերադառնում է իր մշտական բնակության երկիր:

89. Կանոնների 88-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքով Մասնակցի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը նախքան նրա կենսաթոշակային տարիքը մարվելու դեպքում առաջացած միջոցները հօգուտ Մասնակցի փոխանցվում են համապատասխան օտարերկրյա պետությունում նրա անդամակցած կուտակային կենսաթոշակային համակարգին՝ կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ հրամանով սահմանած կարգով և պայմաններով: Եթե համապատասխան օտարերկրյա պետությունում անձը չի մասնակցում կուտակային կենսաթոշակային համակարգի, կամ միջոցների փոխանցումն անհնար է որևէ այլ օբյեկտիվ պատճառով, ապա նա իր միջոցները կարող է ստանալ բացառապես Կանոնների 87-րդ կետով սահմանված կարգով:

90. Մասնակցի մահվան դեպքում Ֆոնդի փայերը կարող են մարվել և ժառանգության կարգով փոխանցվել միայն ֆիզիկական անձանց, իսկ դատական կարգով անժառանգ ճանաչվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

91. Փայերի հետգնման (մարման) ժամանակ մարման վճար չի գանձվում հետևյալ դեպքերում՝

- 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կենսաթոշակի անցնելիս կուտակված միջոցները ստանալու համար (անուիտետի, ծրագրային վճարի կամ միանվագ վճարի տեսքով) փայերի մարման դեպքում,
- 2) Մասնակցի կողմից իր Ֆոնդի փայերը նույն Կառավարչի այլ կենսաթոշակային Ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում,
- 3) Մասնակցի կողմից Ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում առաջին անգամ այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում, բացառությամբ այն փոխանակման դեպքերի, երբ Ֆոնդի փայերը (դրանց մի մասը) ձեռք են բերվել

վերջին 12 ամիսների ընթացքում տեղի ունեցած փայերի փոխանակման գործարքի արդյունքում: Ընդ որում, սույն կետի իմաստով՝

ա. առաջին անգամ փոխանակում է համարվում նաև Ֆոնդի փայերը 12 ամսվա ընթացքում մեկից ավելի կենսաթոշակային ֆոնդերի փայերով փոխանակումը, եթե այդ փոխանակման գործարքների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փոխանակման դիմումը (դիմումները) Մասնակիցների ռեեստրը վարողին են ներկայացվել նույն օրվա ընթացքում, բ. Ֆոնդի փայերի փոխանակման հաշվարկում չեն ներառվում Կառավարչի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակման գործարքները:

4) ՀՀ օրենսդրության համաձայն՝ անձի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնակցի (Մասնակցի համար) առաջին անգամ ընտրած կենսաթոշակային ֆոնդի փայերի առաջին անգամ փոխանակման դեպքում,

5) Ժառանգի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգված փայերի առաջին փոխանակման գործարքի դեպքում,

6) Ֆոնդի դադարեցման դեպքում Մասնակցի ակտիվների հաշվին այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելիս,

7) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

92. Բացի Կանոնների 91-րդ կետում նշված դեպքերից, եթե այլ բան սահմանված չէ Կանոններով, փայերի հետգնման (մարման) ժամանակ Փայի հաշվարկային արժեքի վրա կիրառվում է 1% հետգնման (մարման) վճար, որը գանձվում է հոգուտ Կառավարչի:

## **ԳԼՈՒԽ VIII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ԶԵՌՔԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

93. Կառավարիչը Ֆոնդի փայեր ձեռք բերելու համար հանձնարարական է ներկայացնում իր բանկին՝ Ֆոնդի Մասնակիցների ռեեստրը վարողի համապատասխան հաշվեհամարին սեփական փայերի ձեռքբերման համար նախատեսված գումարը փոխանցելու համար:

94. Կառավարչի՝ Ֆոնդի փայեր ձեռք բերելու գումարը ստանալուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում Մասնակիցների ռեեստրը վարողը Ֆոնդի Կառավարչի հաշվին է փոխանցում Կառավարչի կողմից ձեռքբերվող Ֆոնդի փայերը:

95. Կառավարչի կողմից ձեռքբերվող փայերի քանակը որոշվում է՝ հիմք ընդունելով փայերի թողարկման պահի դրությամբ փայերի վերջին հայտնի տեղաբաշխման գինը:

96. Մասնակիցների ռեեստրը վարողը Ֆոնդի փայերը հետգնելու (մարելու) դիմում ստանալու դեպքում առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում,

կազմակերպում է Ֆոնդի փայերի հետզնումը (մարումը) և հետզնման (մարման) արդյունքում ստացված միջոցների վճարումը:

97. Մասնակիցների ռեեստրը վարողը Ֆոնդի փայերը հետզնելու (մարելու) դիմում ստանալուց հետո ձևավորում է փայերի մարման պահանջը և որոշում է մարման գինը և ընդհանուր ծավալը: Մասնակիցների ռեեստրը վարողը Կառավարչին տրամադրում է տեղեկություն պահանջի մանրամասների վերաբերյալ, ներառյալ՝ մարման ենթակա փայերի քանակի և մարվող ընդհանուր գումարի մասին:

98. Կառավարիչը մարման պահանջի մանրամասների վերաբերյալ տեղեկությունը Մասնակիցների ռեեստրը վարողից ստանալուց հետո առավելագույնը 9 աշխատանքային օրվա ընթացքում Մասնակիցների ռեեստրը վարողին է ուղարկում համապատասխան մարման պահանջից բխող հանձնարարականը, որի արդյունքում իրակացվում է ձևավորված փայերի մարումը:

99. Կանոնների 98-րդ կետով նախատեսված դեպքում փայերի հետզնում (մարում) կատարվում է՝ հիմք ընդունելով Ֆոնդի փայի՝ դիմումը ներկայացնելու պահի դրությամբ վերջին հայտնի հետզնման (մարման) գինը:

#### **ԳԼՈՒԽ IX. ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

100. Մասնակիցն իրավունք ունի փոխանակել իր Ֆոնդի փայերը (բոլորը կամ դրանց մի մասը) այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (այդ թվում՝ այլ Կառավարչի կողմից կառավարվող) փայերով:

101. Ֆոնդի փայերը փոխանակելու համար Մասնակիցը պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնի փայերի փոխանակման դիմում՝ համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձեվով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգ» Կանոնակարգ 10/07-ի:

102. Փոխանակման արդյունքում փոխանակվող փայերը մարվում են և մարման գնին համապատասխանող գումարի չափով (մարվող փայերի քանակի և փայի մարման գնի արտադրյալը) ձեռք են բերվում այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր:

103. Փայերի փոխանակումն իրականացվում է փոխանակման պահանջը ներկայացվելու պահի դրությամբ հայտնի հետզնման (մարման) և նոր փայեր տեղաբաշխելու պահին հայտնի տեղաբաշխման գներով:

104. Փայերի փոխանակումն իրականացվում է Մասնակցի՝ Կանոնների 101-րդ կետով նախատեսված դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

105. Փոխանակման հետ կապված դիմումների ընդունման, փայերի մարման, գումարների փոխանցման, նոր փայերի թողարկման գործընթացները կազմակերպում է Մասնակիցների ռեեստրը վարողը՝ համապատասխան կառավարիչների և պահառուների հետ համատեղ:

106. Փայերի փոխանակման ժամանակ Մասնակիցներին որևէ վճարում չի կատարվում:

### **ԳԼՈՒԽ X. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՈՒՄԸ**

107. Փայերի մարումը կամ Ֆոնդի նոր փայերի թողարկումը կարող է կասեցվել Կանոններով սահմանված հիմքերով կամ ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ որոշմամբ:

108. Ֆոնդի փայերի մարումը կամ նոր փայերի թողարկումը կարող է կասեցվել առավելագույնը 3 ամիս ժամկետով հետևյալ հիմքերից որևէ մեկով, եթե այլ բան սահմանված չէ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և (կամ) ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով՝

- 1) եթե Ֆոնդի կանոնավոր կառավարումը կարող է տուժել փայերի մեծ ծավալով մարման հետևանքով կատարվող վճարման արդյունքում, կամ
- 2) եթե Ֆոնդի ակտիվները չեն կարող ողջամիտ պայմաններով արագորեն իրացվել առանց Ֆոնդին և Մասնակիցներին վնաս պատճառելու, կամ
- 3) եթե դրանով այլ Մասնակիցների շահերը էականորեն կվնասվեն:

109. Կանոնների 108-րդ կետում սահմանված հիմքերով Ֆոնդի փայերի մարումը կամ նոր փայերի թողարկումը կասեցվում է ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ որոշմամբ:

110. Կառավարիչը Կանոնների 108-րդ կետում սահմանված հիմքերի առկայության դեպքում գրավոր դիմում է ՀՀ կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի հետ Ֆոնդի փայերի մարման կամ նոր փայերի թողարկման վերաբերյալ համատեղ որոշում ընդունելու միջնորդագրով:



111. Ֆոնդի փայերի մարումը կամ նոր փայերի թողարկումը կասեցվելու վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ որոշման առկայության դեպքում Ֆոնդի փայերի մարումը կամ նոր փայերի թողարկումը կասեցվում է առավելագույնը 3 ամիս ժամկետով՝ նախապես տեղեկացնելով Կենտրոնական բանկին և Ֆոնդի Պահառուին և նշելով կասեցման հիմքերը, ինչպես նաև այդ մասին տեղեկությունը հրապարակելով առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր ինտերնետային կայքում:

112. Փայերի թողարկում կամ մարում չի կարող իրականացվել այն ժամանակահատվածում, որի ընթացքում Ֆոնդի փայերի մարումը կասեցված է:

## **ԳԼՈՒԽ XI. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՅԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

113. Կախված Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա Ֆոնդի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքից՝ Մասնակիցն իր կուտակային կենսաթոշակը կարող է ստանալ Կանոնների 87-րդ կետում սահմանված ձևերով:

114. Եթե Մասնակիցը ցանկանում է կենսաթոշակը ստանալ անուիտետի տեսքով, ապա ընտրում է ապահովագրական ընկերությունը և անուիտետի պայմանագիրը, և ապահովագրական ընկերության կողմից Մասնակիցների ռեսսոր վարողին ներկայացված պայմանագրի և Մասնակցի կողմից ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա Մասնակիցների ռեսսորը վարողն ՀՀ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում կազմակերպում է Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումն ու դրա արդյունքում ստացված միջոցների փոխանցումը Մասնակցի դիմումում նշված ապահովագրական ընկերությանը՝ անուիտետ գնելու նպատակով: Ապահովագրական ընկերությունն իր հետ պայմանագիր կնքած Մասնակցին գրավոր տեղեկացնում է դրամական միջոցների ստացման և դրանց չափի մասին՝ ստանալու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում: Անուիտետի տեսքով կենսաթոշակը ստանալու հետ կապված հարցերը կարգավորվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով:

115. Եթե Մասնակիցը ցանկանում է կենսաթոշակը ստանալ ծրագրային վճարի տեսքով, ապա վերջինիս կողմից ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա Մասնակիցների ռեսսորը վարողը ՀՀ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում ծրագրային եղանակով կենսաթոշակ ստացող յուրաքանչյուր Մասնակցի համար ամսական պարբերականությամբ հաշվարկում է ծրագրային վճարի չափը՝ բացառապես մարման ենթակա փայերի թվի հիման վրա, կազմակերպում է յուրաքանչյուր անգամ դրա վճարման համար անհրաժեշտ փայերի մարումը և Մասնակցին ծրագրային վճարի կատարումը: Ծրագրային վճարի կատարման ամբողջ ընթացքում չմարված փայերի մասով Մասնակիցը պահպանում է իր՝ որպես կենսաթոշակային ֆոնդի Մասնակցի՝ ՀՀ օրենսդրությամբ

վերապահված իրավունքները: Ծրագրային վճարի տեսքով կենսաթոշակը ստանալու հետ կապված հարցերը կարգավորվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնեցված ծրագրային վճարի հաշվարկման մեթոդաբանությամբ և վճարման կարգով:

116. Ցանկացած ժամանակ, ներառյալ՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը, Մասնակիցը կարող է ստանալ Ֆոնդից վճարումներ Կանոնների 88-րդ կետով սահմանված հիմքերով:

117. Մահացած Մասնակցի փայերը ժառանգվում են՝ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի: Մասնավորապես, մահացած Մասնակցի փայերը կարող են ժառանգության կարգով փոխանցվել միայն ֆիզիկական անձանց, իսկ դատական կարգով անժառանգ ճանաչվելու դեպքում՝ ՀՀ պետական բյուջե: Մասնակցի մահվան դեպքում նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերը ժառանգի ընտրությամբ փոխանցվում են վերջինիս կենսաթոշակային հաշվին կամ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով մարվում են, և մարման արդյունքում ստացված միջոցները վճարվում են ժառանգին՝ միանվագ վճարի տեսքով: Ընդ որում, ժառանգը Մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնում է ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերի ստացման դիմում՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձեվով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգ» Կանոնակարգ 10/07-ի:

118. Կանոնների 113-117-րդ կետերով նախատեսված հիմքերով Ֆոնդից Մասնակցի (նրա ժառանգի) համար Ֆոնդից վճարումների կատարման գործընթացները կազմակերպում է Մասնակիցների ռեեստրը վարողը՝ Կառավարչի և Պահառուի հետ համատեղ:

119. Փայերի փոխանցումը ժառանգի կենսաթոշակային հաշվին և (կամ) կենսաթոշակային ֆոնդի փայերի մարումն ու մարման արդյունքում ստացված միջոցների միանվագ վճարումը՝ իրականացվում է Կանոնների 117-րդ կետի սահմանված դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Փայերը հետ են գնվում (մարվում են) դրանց հետգնման (մարման) պահանջ

ներկայացվելու պահի դրությամբ վերջին հաշվարկված և հրապարակված տվյալ փայի հետգնման գնով:

120. Եթե ժառանգը ներկայացրել է ժառանգված կենսաթոշակային Ֆոնդի փայերի մարման և մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով միանվագ վճարի տեսքով ստանալու դիմում, ապա Ֆոնդի փայերի հետգնման (մարման) ժամանակ գանձվում է լրացուցիչ 2% հետգնման (մարման) վճար՝ տվյալ կենսաթոշակային Ֆոնդի օգտին:

## **ԳԼՈՒԽ XII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

121. Կառավարչի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և Կառավարչի կանոնադրությամբ:

122. Կառավարիչն իրավունք ունի կառավարել Ֆոնդի ակտիվները և իրականացնելու դրանից բխող բոլոր իրավունքները:

123. Կառավարիչն ունի հետևյալ պարտականությունները.

- 1) Ֆոնդի կառավարման հետ կապված իրավաբանական գործառույթներ և հաշվապահական հաշվառման կազմակերպում,
- 2) Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի, ինչպես նաև փայերի հաշվարկային արժեքի և տեղաբաշխման ու հետգնման (մարման) գնի հաշվարկում,
- 3) կառավարչական այլ գործառույթներ:

124. Կառավարիչը պարտավոր է Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը կատարել իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես տվյալ Ֆոնդի կառավարիչ, և որ այդ գործարքներով իր ստանձնած պարտավորությունները կատարվում են բացառապես տվյալ Ֆոնդի ակտիվների հաշվին:

125. Կառավարիչը պարտավոր է ձեռք է բերել բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնցում Ֆոնդի հաշվին նախատեսում է ներդրումներ իրականացնել կամ արդեն իրականացրել է, պարտավոր է նաև մանրամասն ուսումնասիրել այն թողարկողի ֆինանսատնտեսական վիճակը, որի արժեթղթերը պլանավորում է ձեռք բերել կամ արդեն ձեռք է բերել Ֆոնդի հաշվին, ինչպես նաև պետք է ձեռք բերի բավարար տեղեկատվություն գործընկերների/Կոնտրագենտների վճարունակության վերաբերյալ, որոնց հետ Ֆոնդի հաշվին իրականացվում են գործառնություններ:

126. Կառավարչի կողմից ձեռքբերվող և տնօրինվող Ֆոնդի փայերի քանակը չի կարող պակաս լինել Ֆոնդի փայերի ընդհանուր քանակի 1%-ից: Սույն պահանջը չի տարածվում Կառավարչի վրա, եթե Ֆոնդում Կառավարչի մասնակցությունը գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը: Կառավարիչը կարող է ձեռք բերել կամ մարել Ֆոնդի փայերը յուրաքանչյուր աշխատանքային օր:

127. Այն դեպքերում, երբ երրորդ անձանց մեղքով Ֆոնդին վնաս է պատճառվում, Կառավարիչն իրավունք ունի այդ վնասի հատուցում ստանալու նպատակով Ֆոնդի

անունից պահանջ ներկայացնել (պարտավոր է, եթե նման պահանջի չներկայացումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել զգալի՝ ոչ պակաս, քան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.3%-ի չափով կորուստների Ֆոնդի համար) երրորդ անձանց նկատմամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում:

128. Կառավարիչը պատասխանատվություն է կրում իր պարտականությունների խախտման հետևանքով Ֆոնդին կամ Մասնակիցներին պատճառված վնասի համար:

129. Կառավարիչը Ֆոնդի ակտիվների պահառության նպատակով Պահառուի հետ կնքում է պահառության պայմանագիր:

130. Կառավարիչն, առավել արդյունավետ կառավարման նպատակով, կարող է Ֆոնդի կառավարման գործառույթների մի մասը պատվիրակել երրորդ անձանց:

131. Ֆոնդի ակտիվներով ներդրումների իրականացումը կարող է Կառավարչի կողմից փոխանցվել երրորդ անձի՝ միայն ԿԲ նորմատիվ իրավական ակտով սահմանված ակտիվների այն առավելագույն չափի համաձայն, որոնց ներդրման կառավարումը կարող է փոխանցվել երրորդ անձի, ինչպես նաև՝ Կառավարչի կողմից որոշված ներդրումային քաղաքականության և նշված քաղաքականության կիրառման վերաբերյալ Կառավարչի ցանկացած որոշման համաձայն:

132. Պարտականությունների փոխանցումը երրորդ անձանց չի ազատում Կառավարչին Ֆոնդի կառավարման պարտավորությունից: Կառավարիչը շարունակում է պատասխանատվություն կրել պատվիրակված գործառույթների պատշաճ կերպով և բարեխղճորեն իրականացման համար:

### **ԳԼՈՒԽ XIII. ՊԱՏՎԻՐԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

133. Կառավարիչը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի, ինչպես նաև Փայերի հաշվարկային արժեքի և տեղաբաշխման ու հետգնման (մարման) գների հաշվարկումը պատվիրակել է Ավստրիայի և Կենտրոնական Արևելյան Եվրոպայի առաջատար բանկ հանդիսացող «Ռայֆայզն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ»-ին:

134. Բացի Կանոնների 133-րդ կետում նշված ծառայություններից Կառավարիչը կարող է երրորդ անձանց պատվիրակել նաև հետևյալ գործառույթների կատարումը՝

- 1) Ֆոնդի կառավարման հետ կապված իրավաբանական գործառույթներ և հաշվապահական հաշվառման կազմակերպումը,
- 2) կառավարչական այլ գործառույթներ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում կատարվող ներդրումների կառավարման գործառույթի:

135. Կառավարիչը կարող է պատվիրակել կառավարման ենթակա Ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների առավելագույնը այնքան մասի կառավարումը, որի արդյունքում պատվիրակման պայմանագրի կնքման օրվա դրությամբ ընդհանուր պատվիրակված ակտիվների մասը էապես չի գերազանցի պատվիրակումից հետո

Կառավարչի կողմից կառավարվող Ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների մասը: Ընդ որում՝ պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո Կառավարչի կառավարման ներքո գտնվող Ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների մասը որոշելու համար հաշվի է առնվում ոչ միայն պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո Կառավարչի կառավարման ներքո գտնվող ֆոնդի ակտիվների մեծությունը, այլ նաև տվյալ Ֆոնդի ակտիվների հետևյալ որակական չափանիշները.

- 1) Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը, դրա ռիսկայնության աստիճանը,
- 2) Ֆոնդի ներդրումային նպատակներին հասնելու տեսանկյունից Ֆոնդի ակտիվների կարևորությունը,
- 3) Ֆոնդի ակտիվների ներդրումների աշխարհագրական և ոլորտային բաշխվածությունը,
- 4) Կառավարչի և Կոնտրազենտի գործունեության տարածաշրջանները,
- 5) Կառավարչի և Կոնտրազենտի կառուցվածքը, այդ թվում՝ արդյոք Կառավարիչը և Կոնտրազենտը ընդգրկվում են միևնույն խմբում, թե ոչ:

136. Կառավարիչը Ֆոնդի կառավարման գործառույթների պատվիրակման նպատակով նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում ՀՀ Կենտրոնական բանկի «Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության դրամադրման կարգն ու պայմանանները» Կանոնակարգ 10/13-ով նախատեսված փաստաթղթերը.

137. Ֆոնդի գործառույթների պատվիրակման պայմանագրի էական պայմանները, գործառույթների պատվիրակման պայմանները, պատվիրակման նախնական համաձայնության կարգն ու պատվիրակման հետ կապված այլ էական պայմանները կարգավորվում են ՀՀ Կենտրոնական բանկի «Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանանները» Կանոնակարգ 10/13-ով:

#### **ԳԼՈՒԽ XIV. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ**

138. Ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների և ծախսերի սպառիչ ցանկը ներկայացված է Կանոնների 56-րդ կետում:

139. Ֆոնդի ակտիվների հաշվին վճարվում է Կառավարչի պարգևավճարը, որը հաշվարկվում է Ֆոնդի զուտ ակտիվների Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ տարեկան 1% չափով, հաշվեգրվում է օրական կտրվածքով և վճարվում ոչ ուշ քան տվյալ ամսվան հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը: Եթե Կառավարչի

հաշվեգրված պարզևավճարը պարունակում է լումաներ, ապա վճարման ժամանակ լումաները կլորացվում են դեպի ներքև՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ: Պահառուի և Մասնակիցների ռեեստրը վարողի պարզևավճարների դրույքաչափը սահմանվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ՝ համաձայն Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոնների»: Պահառուի և Մասնակիցների ռեեստրը վարողի պարզևավճարները վճարվում են Կառավարչի հաշվին:

140. Ֆոնդի ակտիվների հաշվին եռամսյակը մեկ վճարվում է նաև պարբերական երաշխիքային վճարը, որը հաշվարկվում է Ֆոնդի զուտ ակտիվների Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի տարեկան 0.02% չափով, հաշվեգրվում է օրական կտրվածքով և վճարվում մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը: Եթե հաշվեգրված պարբերական երաշխիքային վճարը պարունակում է լումաներ, ապա վճարման ժամանակ լումաները կլորացվում են ստանդարտ մաթեմատիկական մոտեցմամբ՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:

141. Օրացուցային տարվա ընթացքում Կառավարչի պարզևավճարից և երաշխիքային Ֆոնդին վճարվող պարբերական երաշխիքային վճարներից բացի Ֆոնդի ակտիվների հաշվին իրականացվող Ֆոնդի կառավարման հետ կապված այլ ծախսերի և վճարների չափը սահմանվում է ՀՀ Կենտրոնական բանկի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատավող ծախսերի կազմն ու առավելագույն չափը» Կանոնակարգ 10/12-ով:

142. Սույն բաժնում չնշված այլ ծախսերը, որոնք ներառում, սակայն չեն սահմանափակում Պահառուի և Մասնակիցների ռեեստրը վարողի վճարները, ներդրումային առաջարկների և հետազոտությունների ձեռքբերման ծախսերը, Ֆոնդի ակտիվների ներդրման հետ կապված իրավաբանական ծախսերը, դատական ծախսերը, կատարվում են Կառավարչի հաշվին:

143. Պահառուի և Մասնակիցների ռեեստրը վարողի վճարը կատարվում է համաձայն Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոնների»:

## **ԳԼՈՒԽ XV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ**

144. Ֆոնդի հաշվապահական հաշվառումը կատարվում է և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով՝

Կենտրոնական բանկի կողմից ընդունելի և միջազգային պրակտիկայում նման ֆոնդերի համար ընդունված սկզբունքներին համապատասխան, մասնավորապես՝

Ավստրիայի Հանրապետության կորպորատիվ կառավարման օրենսգրքի և Ներդրումային ֆոնդերի վերաբերյալ Ավստրիայի Հանրապետության օրենքի համաձայն:

145. Կանոնների 69-րդ կետի դրույթների առկայության դեպքում ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող օրական հաշվետվությունները մնում են անփոփոխ, այն է՝ Հաշվարկման օրվան նախորդող Գնահատման օրվա համար ուղարկվածը: Կանոնների 62-րդ կետով սահմանված դեպքերի ի հայտ գալու պարագայում ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվում ոչ էական սխալ պարունակող օրական հաշվետվությունները:

#### **ԳԼՈՒԽ XVI. ՖՈՆԴԻ ՀԱՐԿՈՒՄԸ**

146. Համաձայն ՀՀ օրենսդրության՝ Ֆոնդը չի հանդիսանում շահութահարկով հարկման օբյեկտ, իսկ կենսաթոշակային ֆոնդերի կառավարման ծառայությունների մատուցումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

147. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչում պետության կողմից Մասնակցի համար կատարված կուտակային վճարները, Մասնակցի կողմից կատարած կուտակային վճարների հաշվին մինչև կենսաթոշակների ստացման իրավունքի ձեռքբերման սահմանված ժամկետը լրանալը ստացվող եկամուտները, կենսաթոշակային տարիքից հետո ստացվող կուտակային կենսաթոշակը ազատված են եկամտային հարկից:

#### **ԳԼՈՒԽ XVII. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

148. Ֆոնդի ակտիվների ներդրումից ձևավորված ողջ եկամտի հաշվին աճում է Ֆոնդի ակտիվների արժեքը, ինչի արդյունքում աճում է Ֆոնդի Մասնակիցներին պատկանող փայերի արժեքը: Ֆոնդի շահույթի բաշխում շահաբաժինների տեսքով չի նախատեսվում:

149. Մասնակցի՝ Ֆոնդի եկամտի մասնաբաժինը արտացոլվում է Ֆոնդի Փայի հաշվարկային արժեքում:

150. Մասնակիցը կարող է ստանալ Ֆոնդի եկամտի իր մասնաբաժինը միայն փայերը մարելիս:

#### **ԳԼՈՒԽ XVIII. ՖՈՆԴԻ ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

151. Ֆոնդի միացումն իրականացվում է սույն գլխի, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով Կանոնների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու և այն ֆոնդի Կանոնների մեջ կատարված համապատասխան փոփոխությունների գրանցման միջոցով, որին միացել են:

152. Ֆոնդը կարող է միանալ միայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով նույն տեսակի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի:

153. Ֆոնդի միացումը կատարվում է Կառավարչի Դիտորդ խորհրդի որոշման հիման վրա:

154. Միացման դեպքում Ֆոնդի ակտիվները և պարտավորությունները փոխանցվում են այն ֆոնդին, որին միանում է, փոխանցման ակտին համապատասխան:

155. Ֆոնդի միացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Կառավարչի հաշվին:

156. Ֆոնդի դադարեցումն իրականացվում է սույն գլխի և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի համաձայն և նշված օրենքի 102-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:

157. Ֆոնդի դադարեցման մասին որոշումը կարող է կայացնել Կառավարիչը կամ Պահառուն, ընդ որում՝ Կառավարիչը կարող է որոշում կայացնել Ֆոնդի դադարեցման վերաբերյալ միայն այն դեպքում, երբ Ֆոնդի կառավարումը չի փոխանցվել այլ կառավարչի, իսկ Պահառուն կարող է որոշում կայացնել Ֆոնդի դադարեցման վերաբերյալ, երբ Ֆոնդի կառավարումը փոխանցվել է Պահառուին, և վերջինս Ֆոնդի կառավարումը չի փոխանցել այլ կառավարչի: Ֆոնդի դադարեցման մասին որոշում չկայացվելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը պարտավոր է Պահառուի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Ֆոնդի դադարեցման պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան:

158. Կառավարչի կամ Պահառուի կողմից Ֆոնդը կարող է դադարեցվել միայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում:

159. Ֆոնդի դադարեցման դեպքում Ֆոնդի Մասնակցի ակտիվների հաշվին և Ֆոնդի Մասնակցի անունից տվյալ Ֆոնդի Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գնվում են այլ պարտադիր կենսաթոշակային Ֆոնդի փայեր Ֆոնդի ընտրությունը կատարվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ֆոնդի Մասնակցի կողմից ֆոնդի ընտրությունը կատարելու անհրաժեշտության և դրա կարգի մասին գրավոր և պատշաճ ձևով տեղեկացվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ընտրությունը չկատարվելու դեպքում ֆոնդի ընտրությունը կատարվում է տվյալ ֆոնդի Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված ծրագրային մոդուլի միջոցով պատահականության սկզբունքով:

160. Ֆոնդի դադարեցման մասին ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալուց հետո Կառավարիչը կամ Պահառուն անհապաղ օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները ներառող հայտարարություն են հրապարակում Ֆոնդի դադարեցման վերաբերյալ առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և ինտերնետային կայքում: Ֆոնդի



դադարեցման հաղորդագրության հրապարակման հաջորդ օրվանից Ֆոնդի փայերի թողարկումն ու մարումը կասեցվում է:

#### **ՎՆՈՒՄ XIX. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

161. Կառավարչի փոփոխությունն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն:

162. Կառավարիչը կարող է այլ կառավարչի փոխանցել Ֆոնդի կառավարումը միայն Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագրի առկայության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով տրված նախնական համաձայնության առկայության դեպքում:

163. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման փոխանցման գործընթացը, ինչպես նաև փոխանցման պայմանագիրը կնքվում է՝ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի:

164. Նախքան այլ կառավարչի ֆոնդի կառավարման փոխանցումը, փոխանցող և ստանձնող կառավարիչների խորհուրդները հաստատում են նախատեսվող փոխանցման պայմանագիրը: Պայմանագրի հաստատումից հետո փոխանցող և ստանձնող կառավարիչները կնքում են Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագիրը, որն ուժի մեջ է մտնում այդ պայմանագրում նշված ժամկետում, բայց ոչ շուտ, քան ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնությունը տրամադրելու օրը:

#### **ՎՆՈՒՄ XX. ՊԱՀԱՌՈՒՄԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

165. Պահառուի փոփոխությունն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի և «Կուտակային կենսաթոշակներին մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի համաձայն:

166. Ֆոնդի պահառության պայմանագիրը դադարելուց հետո Պահառուն պարտավոր է Ֆոնդի ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: Ֆոնդի պահառության պայմանագրի դադարեցման դեպքում Պահառուն պարտավոր է շարունակել կատարել ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված իր պարտականությունները մինչև նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս Ֆոնդի ակտիվների փոխանցումը: Պահառուն շարունակում է պատասխանատվություն կրել մինչև ակտիվները և փաստաթղթերը նոր պահառուին ամբողջությամբ փոխանցելը:

167. Տեղեկությունը ստանալուց հետո՝ 60-օրյա ժամկետում, Կառավարիչը պարտավոր է պահառության պայմանագիր կնքել այլ պահառուի հետ:

## **ԳԼՈՒԽ XXI. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

168. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների ամբողջ գումարի վերադարձելիությունը՝ ճշգրտված տարեկան գնաճով:

169. Կուտակային ակտիվների գումարի վերադարձելիությունը երաշխավորվում է Երաշխիքային ֆոնդի միջոցների հաշվին, իսկ երաշխիքային ֆոնդում բավարար միջոցներ չլինելու դեպքում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

170. Կառավարչի գործունեության հետ կապված խնդիրների առաջացման դեպքում Մասնակիցը կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին համապատասխան:

## **ԳԼՈՒԽ XXII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ**

171. Կառավարչի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ Կառավարչի ինտերնետային կայքից՝ <https://www.c-quadrat-ampega.am/>, ինչպես նաև՝ <https://www.cba.am/am/SitePages/ifpublicfunds.aspx>, <https://cda.am/am> և <https://www.abcfinance.am/> կայքերից:

172. Կառավարչի կողմից տեղեկությունները հրապարակվում են սույն գլխով, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

173. Կառավարչի ինտերնետային կայքում առնվազն հրապարակվում են իր և Ֆոնդի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

- 1) ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացությունը,
- 2) Ֆոնդի ակտիվների կազմի և կառուցվածքի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն,
- 3) Եկամտաբերության վերաբերյալ տեղեկատվություն,
- 4) Ֆոնդի Մասնակիցներին շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ որոշումների մասին տեղեկատվություն, ինչպես նաև Կառավարչի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում:
- 5) Կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Կառավարչի կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության չափը

174. Բացի այդ, Կառավարիչը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, հրապարակում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, Փայի հաշվարկային արժեքը և մարման ու թողարկման գները, ինչպես նաև՝ Ֆոնդի եկամտաբերության այլ ցուցանիշներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի:

175. Կառավարիչը կարող է հրապարակել նաև Ֆոնդի վերաբերյալ այլ տեղեկություններ, որոնք ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված առևտրային կամ այլ գաղտնիք կամ ծառայողական տեղեկատվություն չեն համարվում:

### **ԳԼՈՒԽ XXIII. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

176. Կանոնների փոփոխություններն իրականացվում են սույն գլխով և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:


177. Կանոնները փոփոխվում են Կառավարչի Դիտորդ խորհրդի որոշման հիման վրա:

178. Կանոնների փոփոխությունները ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո հրապարակվում են Կառավարչի ինտերնետային կայքում:

179. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո, եթե փոփոխություններում դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Կառավարչի կողմից, օրենսդրության փոփոխություններով պայմանավորված, Կանոններում կատարվող փոփոխությունները կամ այն փոփոխությունները, որոնց համաձայն Կանոններով սահմանված Կառավարչի պարզևավճարը նվազում է, ուժի մեջ են մտնում հանրապետական տարածում ունեցող մամուլում հրապարակվելուց մեկ ամիս հետո, եթե հրապարակված հայտարարությամբ դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

**Համարակալված և կնքված է Կ 2 (Քառասունհինգ) թերթ**

Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչության Կորպորատիվ ֆինանսների բաժնի պետ՝



Հայկ Եսայան

Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչության Կորպորատիվ ֆինանսների բաժնի վերահսկող՝



Անի Մանուկյան